ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱԳՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞րն է գործարարության ծրագրի արտադրական բաժնի առանցքային ցուցանիշը:** *(1 միավոր)*

1) ապրանքի իրացման սխեման
2) կանխատեսվող շահույթը
3) արտադրական կարողությունը
4) կիրառվող ստանդարտները

2 **Ո՞րն է կառավարման կազմակերպական կառուցվածքի անբաժանելի մասը:** *(1 միավոր)*

1) աստիճանակարգը
2) համակարգը
3) արարողակարգը
4) կառուցակարգը

3 **Լիազորությունը ռեսուրսների տնօրինման և կարգադրություններ անելու ինչպիսի՞ իրավունք է:** *(1 միավոր)*

1) մասնակի
2) լիակատար
3) սահմանափակ
4) ամբողջական

4 **Կառավարման ինչպիսի՞ գործառույթ է վերահսկողությունը**: *(1 միավոր)*

1) կարգավորիչ
2) եզրափակիչ
3) հիմքային
4) առաջնային

5 **Տրվածներից ո՞րն է ընկած նվազագույն աշխատավարձի սահմանման հիմքում:** *(1 միավոր)*

1) նվազագույն պարենային զամբյուղը
2) նվազագույն պարենային ընտրությունը
3) նվազագույն սպառողական վարկը
4) նվազագույն սպառողական զամբյուղը

6 **Բերվածներից ո՞րը կոնֆլիկտների լուծման միջանձնային եղանակի ոճ չէ:** *(1 միավոր)*

1) փոխզիջումը
2) համահարթեցումը
3) համագործակցումը
4) սահմանազատումը

7 **Քանի՞ մակարդակներով են ներկայացված մարդու պահանջմունքները Աբրահամ Մասլոուի պահանջմունքների դասակարգման տեսության մեջ:** *(1 միավոր)*

1) 11
2) 14
3) 3
4) 5

8 **Տարբերակներից ո՞րը *չի* դասվում նյութական խթանների շարքին՝ ըստ ժամանակակից տեսությունների:** *(1 միավոր)*

1) հավելավճարը
2) պարգևը
3) աշխատավարձը
4) մասնակցողականությունը

9 **Ի՞նչ է անգլերենից թարգմանաբար նշանակում «սթրես» բառը:** *(1 միավոր)*

1) լարվածություն
2) ջղայնություն
3) հոգնածություն
4) հյուծվածություն

10 **Տարբերակներից ո՞րը սթրեսի տարատեսակ *չէ*:** *(1 միավոր)*

1) սոցիալական
2) տեղեկատվական
3) փաստագրական
4) ֆիզիոլոգիական

11 **Բերված տարբերակներից ո՞րը շուկայի հիմնական տարր չէ:** *(1 միավոր)*

1) համագործակցությունը
2) մրցակցությունը
3) պահանջարկը
4) առաջարկը

12 **Ինչի՞դեր է կատարում գինը առաջարկի և պահանջարկի միջև:** *(1 միավոր)*

1) փոխարկիչի
2) կարգավորիչի
3) խթանիչի
4) բազմապատկիչի

13 **Ի՞նչ փոփոխություններով է պայմանավորված կառուցվածքային գործազրկությունը:** *(1 միավոր)*

1) տեխնոլոգիական
2) կառավարչական
3) դեմոգրաֆիական
4) կլիմայական

14 **Տարեկան քանի՞ տոկոսից բարձր տեմպերով են աճում գները գերսղաճի (հիպերինֆլյացիա) դեպքում:** *(1 միավոր)*

1) 10 %-ից
2) 70 %-ից
3) 100 %-ից
4) 50 %-ից

15 **Կարճ ժամանակահատվածում ինչպիսի՞ կապ կա սղաճի և գործազրկության միջև՝ ըստ Ֆիլիպսի կորի:** *(1 միավոր)*

1) հակադարձ
2) փոխադարձ
3) անմիջական
4) աճանցիալ

16 **Այլ կերպ ինչպիսի՞ քաղաքականություն են համարվում սղաճի կարգավորման ուղղակի մեթոդները:** *(1 միավոր)*

1) ծախսերի
2) եկամուտների
3) ներդրումային
4) հարկային

17 **Տրվածներից ո՞րն է մարքեթինգային հետազոտության կիրառական գործիք***: (1 միավոր)*

1) փաստարկումը
2) հավաքագրումը
3) մոտարկումը
4) դիտարկումը

18 **Ինչպիսի՞ գործունեություն է մարքեթինգը՝ ըստ Ֆիլիպ Կոտլերի:** *(1 միավոր)*

1) գործնական
2) վարչական
3) սոցիալական
4) տնտեսական

19 **Ինչպիսի՞ բնույթ ունի վաճառքի խթանումը՝ որպես միջոցառումների համակարգ***: (1 միավոր)*

1) երկարաժամկետ
2) կարճաժամկետ
3) ռազմավարական
4) մարտավարական

20 **Որքա՞ն է փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի՝ օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի թիվը:** *(1 միավոր)*

1) 25
2) 49
3) 36
4) 50

21 **Հաշվետվություններից ո՞րը ֆինանսական փաթեթի կազմում *չի* ընդգրկվում:** *(1 միավոր)*

1) շրջանառության տեղեկագիրը
2) դրամական հոսքերը
3) սեփական կապիտալում փոփոխությունները
4) համապարփակ ֆինանսական արդյունքները

22 **Ի՞նչ է հաշվապահական հաշվառման մեթոդը:** *(1 միավոր)*

1) Ընթացիկ հաշվապահական տեղեկատվության ընդհանրացումն է:
2) Տնտեսական միջոցների ընթացիկ վերահսկողությունն է:
3) Հաշվապահական հաշվառման օբյեկտների ուսումնասիրության և հետազոտության եղանակների ամբողջությունն է:
4) Երկու խումբ ցուցանիշների՝ տնտեսական միջոցների և դրանց գոյացման աղբյուրների հանրագումարային տվյալների հաշվեկշռային ընդհանրացումն է:

23 **Ինչպիսի՞ գնաճ է նպատակադրում Կենտրոնական բանկը:** *(1 միավոր)*

1) չափավոր
2) զսպող
3) հաստատուն
4) լողացող

24 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված համայնքային բյուջեների բաղկացուցիչ մասերի համարները:** *(1 միավոր)*

1. պահուստային, 2. վարչական, 3. ֆինանսական, 4. ֆոնդային

1) 2 և 4
2) 3 և 4
3) 1 և 3
4) 1 և 2

25 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված ուղղակի հարկերի համարները:** *(1 միավոր)*

1. ճանապարհային, 2. ակցիզային, 3. եկամտային, 4. ավելացված արժեքի

1) 2 և 3
2) 2 և 4
3) 1 և 4
4) 1 և 3

26 **Տրվածներից ո՞րը ֆինանսական ռեսուրս չէ:** *(1 միավոր)*

1) հիմնական միջոցները
2) կրեդիտորական պարտքերը
3) սեփական կապիտալը
4) երկարաժամկետ վարկերը

27 **Հաշվապահական հաշվառման վարման ո՞ր փուլին են հաջորդում տարեվերջյան ճշգրտումները:** *(1 միավոր)*

1) գրանցամատյանների վարման
2) շրջանառության տեղեկագրի կազմման
3) սկզբնական հաշվառման կազմակերպման
4) հաշիվներում գրանցման

28 **Տրվածներից ո՞ր մեթոդով են տնտեսական միջոցները ստանում դրամական արտահայտություն:** *(1 միավոր)*

1) գնահատման
2) կրկնակի գրանցման
3) գույքագրման
4) փաստաթղթավորման

29 **Որպես ի՞նչ են դասակարգվում վաճառքի համար պատրաստված հաստոցները:** *(1 միավոր)*

1) կապիտալ
2) արտադրանք
3) ապրանք
4) նյութեր

30 **Տրվածներից ո՞րը մրցակցության գործառույթ չէ: Նշել դրա համարը:** *(1 միավոր)*

1) կարգավորման
2) հակամենաշնորհային
3) գնագոյացման
4) հաշվեկշռային

31 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. գույքագրումը
2. վերագնահատումը
3. կրկնակի գրանցումը
4. հաշվանցումը
5. փաստաղթավորումը
6. գնահատումը
7. հաշվեգրումը

32 **Տրվածներից 3-ը հարկային համակարգի սկզբունքներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. հաշվետվողականությունը
2. օբյեկտիվությունը
3. համախմբվածությունը
4. թափանցիկությունը
5. գաղտնիությունը
6. պարզությունը
7. անկախությունը

33 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի դասեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ընթացիկ ակտիվները
2. դեբիտորական պարտքերը
3. սեփական կապիտալը
4. կրեդիտորական պարտքերը
5. ծախսերը
6. փոխառությունները
7. եկամուտները

34 **Տրվածներից 3-ը առևտրային կազմակերպությունների ռազմավարական պլանավորման գործառույթի իրականացման փուլեր են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունը և գնահատումը
2. որոշումների ընդունման սահմանափակումների ու չափանիշների ձևակերպումը
3. առաքելության և նպատակների սահմանումը
4. ստանդարտների մշակումը
5. ներքին միջավայրի իրավիճակային վերլուծությունը
6. փաստացի արդյունքների համեմատումը ստանդարտների հետ
7. ճշգրտող գործողությունների իրականացումը

35 **Տրվածներից 3-ը գործարարության ծրագրի (բիզնես պլան) բաժիններ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. փոփոխությունների կառավարումը
2. կոնֆլիկտների կառավարումը
3. կառավարման կազմակերպումը և անձնակազմը
4. որակի կառավարումը
5. ներդրումների կառավարումը
6. ռիսկերի կանխատեսումը և կառավարումը
7. ֆինանսական ծրագիրը և ֆինանսական ռազմավարությունը

36 **Տրվածներից 3-ը, ըստ կառավարման ժամանակակից գրականության, կառավարման հիմնական կամ ընդհանուր գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. պատվիրակումը
2. լիազորումը
3. պլանավորումը
4. կանխատեսումը
5. կազմակերպումը
6. համակարգումը
7. շահադրդումը

37 **Տրվածներից 3-ը փողի գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. շրջանառության միջոցի
2. փոխանցման միջոցի
3. հիմնական միջոցի
4. կուտակման միջոցի
5. վճարման միջոցի
6. շրջանառու միջոցի
7. փոխանակման միջոցի

38 **Տրվածներից 3-ը գործազրկության տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. պարբերաշրջանային
2. փոխանակային
3. ֆրիկցիոն
4. սեզոնային
5. գործառութային
6. տարածաշրջանային
7. համակարգային

39 **Տրվածներից 3-ը վերջնական սպառողների շուկան *մարքեթինգային տեսանկյունից* հատվածավորելու չափանիշներ են: Նշել այդ տարբերակների համարները:** *(3 միավոր)*

1. վարքագծային
2. հետագծային
3. ժողովրդագրական
4. ազգագրական
5. ժամանակագրական
6. ռազմավարական
7. աշխարհագրական

40 Տրվածներից 3-ը, ըստ *նշանակության դասակարգման*, մարքեթինգային տեղեկատվության (տվյալների) տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. զգուշացնող
2. փաստաթղթային
3. պարբերական
4. վերացական
5. տեղեկատվական
6. հանձնարարական
7. նորմատիվային